

ՃՇԴԱԻՄ ՄԲ

Դամանակոի այսօրուայ Մեծ Յորելեանը խորազրին ներքեւ, Տիրան
էֆ . Զրաքեանի կողմէ պատրաստուած զեղարուեստական քարթ-փառթալ -
ներու նկատմամբ սխալ բացատրութիւնը կը փափաքիմ որ ուղղուի :

Օչական գիւղը կը գտնուի Ս . Էջմիածնի մօտ , որու եկեղեցիին մէջ
ամփոփուած է Ս . Մեսրոպի մարմինը , իսկ Ս . Սահակ հայրաւկետի զերեզ-
մանը կը մնայ Մշոյ Մատնավանքէն դէպի հիւսիս մէկ ժամ հեռաւորութեամբ
Աշտիշատ փոքրիկ մատուոին մէջ ,ուր ամփոփուած է նաև Շուշանայ-Դստեր
Մեծին Վարդանայ մարմինը : Աւելի մանրամասնութիւնք տեսնել ժամա-
նակոի 1563 թիւը Տարօնոյ Վանքերը խորազրով յօդուած :

6 Հոկտ . 913

ԱԲԴԱՐ ՎՐԴ .